ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿՄՀՔ-ԲՄԱՇՁԲ-25/24

ք. Հրազդան 23 06 205թ.

Հրազդանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ս.Միքայելյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Շ. Խալոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների կատարումը ամբողջ ծավալով կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ տեխնիկական բնութագրին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանն այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված հինգ տարի՝: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 199.800.000 (մեկ հարյուր իննսունինը միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 33.300.000 (երեսուներեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
2	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
3	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով

Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հրազդանի համայնքապետարան	**«ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ**
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1	Գեղարքունիքի մարզ, գ. Լիճք Ա6 թղմ. 12փ., տ1
վարչական շենք	Բանկը՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հրազդանի ՏԳԲ	Հ/Հ՝ 220193335431000
Հ/Հ 900122001440	ՀՎՀՀ՝ 08422964
ՀՎՀՀ 03027114	
_____Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ	_____Շ. ԽԱԼՈՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ	/ստորագրություն/Կ.Տ

23 06

Հավելված N 1
2025թ. կնքված
«ԿՄՀՔ-ԲՄԱՇՁԲ-25/24» ծածկագրով պայմանագրի

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԱԹԵՐԹԸ

N	Աշխատանքների և ծախսերի անվանում	Չափի միավոր	Քանակ	Միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	2	3	4	5	6
	Հողային աշխատանքներ				
1	գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /III կարգ	մ³	1159,200	0,769	891,533
2	գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /IVբ կարգ	մ³	1863,000	0,995	1853,322
3	Գրունտի տեղափոխում 4 կմ լցակույտ	տն	5626,260	0,463	2602,404
4	Աշխատանք լցակույտում	մ³	3022,200	0,076	229,569
5	գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/կողլիցք /IVբ կարգ	մ³	289,800	0,843	244,183
6	գրունտի մշակում բուլդոզերով մինչև 30 մ տեղափոխումով/ լիցք	մ³	289,800	0,715	207,134
7	Գրունտի խտացում և ամրացում թրթրազլդոնով, 6 անցումով 25 սմ շերտի հաստությամբ	մ³	289,800	0,309	89,458
	Երթևեկելի մաս				
1	Ճանապարհի հիմքի նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպճային խառնուրդով h=12սմ /ГОСТ 23735-79	մ³	949,100	10,111	9596,612
2	Հիմքի կառուցում խճակոպճավազային C-5 խառնուրդով h=15սմ ГОСТ 25607-2009	մ²	7909,300	2,226	17602,988
3	Ծածկի կառուցում խոշորահատիկ ասֆալտբետոնե խառնորդով h=6 սմ ГОСТ 9128-2013	մ²	7780,500	6,928	53905,631
4	Ծածկի կառուցում մանրահատիկ Բ տիպի ասֆալտբետոնե խառնորդով h=4 սմ ГОСТ 9128-2013	մ²	7780,500	5,112	39777,624
5	Կողնակների ամրացում ավազակոպճային խառնուրդով h=10 սմ	մ²	1288,000	1,171	1507,757
	Իջատեղեր և մուտքեր				
1	գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /IVբ (13) կարգ Գրունտի տեղափոխում 4 կմ լցակույտ	մ³	559,000	0,992	554,359
2	Աշխատանք լցակույտում	մ³	559,000	0,076	42,462
3	Ճանապարհի հիմքի նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպճային խառնուրդով h=12սմ /ГОСТ 23735-79	մ³	268,360	10,111	2713,462
4	Հիմքի կառուցում խճակոպճավազային C-5 խառնուրդով h=15սմ ГОСТ 25607-2009	մ²	2236,350	2,226	4977,235
5	Ծածկի կառուցում մանրահատիկ Բ տիպի ասֆալտբետոնե խառնորդով h=5 սմ ГОСТ 9128-2013	մ²	2236,350	6,302	14093,914

	Մայթեր				
1	Եզրաքարերի հիմքի ավազախճային նախաշերտ h=10սմ ГОСТ 25607-2009	մ³	67,700	13,351	903,885
2	Բազալտե 150*300 եզրաքարերի տեղադրում Բ 15 դասի բետոնե հիմքի վրա	մ	1191,400	15,935	18984,660
3	Բազալտե 100*200 եզրաշարերի տեղադրում Բ 15 դասի բետոնե հիմքի վրա	մ	1063,900	12,304	13090,712
4	Ավազակոպճային հիմքի կառուցում h=10 սմ /ГОСТ 23735-79	մ²	1298,500	1,249	1621,443
5	Ավազացեմենտային հիմքի կառուցում h=3 սմ 3/1 հարաբերությամբ	մ³	38,955	33,069	1288,214
6	Մայթի սալիկապատում h=6 սմ բետոնե սալիկներով ГОСТ 17608-2017	մ²	1298,500	9,070	11777,432
	ԿՄ 0+295-ԿՄ0+726 Մետաղական բազրիքի կառուցում				
1	գրունտի մշակում ձեռքով/ փոսորակների փորում	մ³	9,100	4,206	38,273
2	Հիմքերի կառուցում Բ 20 դասի բետոնով	մ³	9,100	71,513	650,773
3	Մետաղական կարկասի կառուցում	տն	6,502	68,217	443,550
4	ուղղ. խողովակ 60*60*2,5 ГОСТ 8639-82	մ	354,200	2,804	993,003
5	ուղղ. խողովակ 60*30*2,5 ГОСТ 8639-83	մ	743,800	3,568	2653,955
6	ուղղ. խողովակ 40*20*2,5 ГОСТ 8639-84	մ	1216,900	4,041	4918,008
7	Մետաղական բազրիքի երկշերտ յուղաներկում	մ²	242,880	1,376	334,097
	ջրահեռացման համակարգի կառուցում վաքեր				
1	Ավազակոպճային նախապատրաստական շերտ Ֆ-2-20 վաքերի տակ	մ³	80,500	11,012	886,498
2	Հավաքովի Ֆ-2-20 վաքերի տեղադրում	մ³	121,580	40,879	4970,040
3	Հավաքովի Ֆ-2-20 վաքերի արժեք	հատ	1215,800	12,142	14762,820
4	Հավաքովի ե/բ 30*340վաքերի տեղադրում	մ³	4,692	40,879	191,790
5	Հավաքովի ե/բ 30*34 վաքերի արժեք	հատ	18,767	51,579	967,968
6	Հավաքովի ե/բ 35*60 վաքերի տեղադրում մետաղական ցանցով / ГОСТ 32955-2012 0,35մ3	մ³	8,070	40,879	329,892
7	Հավաքովի ե/բ 35*60 վաքերի արժեք մետաղական ցանցով / ГОСТ 32955-2012	զմ	62,900	118,330	7442,955
	Մետաղական խողովակների և գլխամասերի կառուցում				
1	Խողովակների ավազակոպճային նախաշերտ /ГОСТ 23735-79	մ³	1,300	11,012	14,316
2	Մետաղական խողովակների տեղադրում d= 530*6,0մմ ГОСТ 10704-91	զմ	11,000	92,162	1013,785
3	Մետաղական խողովակների տեղադրում d= 325*6,0մմ ГОСТ 10704-91	զմ	17,400	48,376	841,750
4	Խողովակների հիդրոմեկուսացում բիտումային մաստիկով	մ²	36,100	2,061	74,420

5	գլխամասերի կառուցում F-150, W4, B-15 դասի բետոնով	մ³	0,600	131,323	78,794
6	Գլխամասերի երկշերտ հիդրոմեկուսացում բիտումային մաստիկով	մ²	0,800	1,353	1,082
	ԿՄ 0+687,6-ում և ԿՄ 1+107,3-ում ջրհավաք հորերի կառուցում				
1	գրունտի մշակում 0,5մ3 տարողությամբ էքսկավատոչրով/բեռնելով ավտոինքնաթափ/ III կարգ	մ³	0,140	0,769	0,108
2	գրունտի տեղափոխում 4 կմ լցակույտ	տն	0,266	0,463	0,123
3	աշխատանք լցակույտում	մ³	0,140	0,076	0,011
4	Հիմքի խճային նախաշերտ 20-40 / ГОСТ 8267-93	մ³	0,162	11,413	1,849
5	ջրհավաք հորերի կառուցում F-150, W4, B-15 դասի բետոնով	մ³	0,700	146,855	102,798
6	ջրհավաք հորերի գրունտի հետ շբվող մակերեսների ջրամեկուսացում բիտումային մաստիկով/ 2 շերտ	մ²	5,400	1,544	8,338
7	Մետաղական ցանցերի պատրաստում	տն	0,091	144,101	13,136
8	Պողպատյա ամրան 12A 500c /ГОСТ 34028- 2016	տն	0,005	485,462	2,408
9	Պողպատյա ամրան 22A 500c /ГОСТ 34028- 2016	տն	0,030	485,462	14,758
10	Պողպատյա անկյունակ63*63*6/ ГОСТ 8509-93	զմ	10,000	3,696	36,955
11	Մետաղական ցանցերի երկշերտ յուղաներկում	մ²	3,720	2,088	7,766
	ԿՄ 1+75,5-ում ջրհավաք հորի կառուցում				
1	գրունտի մշակում 0,5մ3 տարողությամբ էքսկավատոչրով/բեռնելով ավտոինքնաթափ/ III կարգ	մ³	0,700	0,769	0,538
2	գրունտի տեղափոխում 4 կմ լցակույտ	տն	1,330	0,463	0,615
3	աշխատանք լցակույտում	մ³	0,700	0,076	0,053
4	Հիմքի խճային նախաշերտ 20-40 / ГОСТ 8267-93	մ³	0,081	11,413	0,924
5	ջրհավաք հորերի կառուցում F-150, W4, B-15 դասի բետոնով	մ³	0,330	146,855	48,462
6	ջրհավաք հորերի գրունտի հետ շբվող մակերեսների ջրամեկուսացում բիտումային մաստիկով/ 2 շերտ	մ²	2,700	1,544	4,169
7	Մետաղական ցանցերի պատրաստում	տն	0,046	147,784	6,736
8	Պողպատյա ամրան 12A 500c /ГОСТ 34028- 2016	տն	0,002	451,907	1,121
9	Պողպատյա ամրան 22A 500c /ГОСТ 34028- 2016	տն	0,015	451,907	6,869
10	Պողպատյա անկյունակ63*63*6/ ГОСТ 8509-93	զմ	5,000	3,206	16,030
11	Մետաղական ցանցերի երկշերտ յուղաներկում	մ²	1,860	2,081	3,871
	ԿՄ 1+120-ում ջրհավաք հորի կառուցում				
1	գրունտի մշակում 0,5մ3 տարողությամբ էքսկավատոչրով/բեռնելով ավտոինքնաթափ/ III կարգ	մ³	2,810	0,769	2,161
2	գրունտի տեղափոխում 4 կմ լցակույտ	տն	5,339	0,463	2,470
3	աշխատանք լցակույտում	մ³	2,810	0,076	0,213

4	Հիմքի խճային նախաշերտ 20-40 / ГОСТ 8267-93	մ³	0,225	11,413	2,568
5	ջրհավաք հորերի կառուցում F-150, W4, B-15 դասի բետոնով	մ³	1,430	146,855	210,002
6	ջրհավաք հորերի գրունտի հետ շբվող մակերեսների ջրամեկուսացում բիտումային մածիկով/ 2 շերտ	մ²	8,400	1,546	12,989
	Էլ. հենասյուների տեղափոխում				
1	Էլ. հենասյուների ապամոնտաժում	հատ	4,000	8,625	34,501
2	Հենասյուների բների փորում ձեռքո կարգ/ կողլիցք	մ³	0,800	7,838	6,270
3	Հիմքերի իրականացում Բ 15 դասի բետոնով	մ³	0,800	78,389	62,711
4	Էլ. հենասյուների տեղադրում	հատ	4,000	16,787	67,149
	Ճանապարհի կահավորում և գծանշում				
1	Ճանապարհային նշանների տեղադրում /նախազգուշացնող/	հատ	1,000	49,474	49,474
2	Ճանապարհային նշանների տեղադրում /առավելության/	հատ	34,000	36,695	1247,642
3	Ճանապարհային նշանների տեղադրում/ հատուկ թելադրանքի/	հատ	8,000	44,304	354,433
4	Ճանապարհային նշանների տեղադրում/ լրացուցիչ տեղեկատվության/	հատ	1,000	44,304	44,304
5	Պողպ. խողովակD=57x3,5մմ/	գմ	133,000	2,895	384,973
6	Հենասյուների երկշերտ յուղաներկում ժանգակայուն ներկով	մ²	23,804	2,098	49,944
7	Ճանապարհի գծանշում ճանապարհային ջերմապլաստիկ լուսանդրադարձնող ներկով 3 մմ հաստությամբ/ սպիտակ գույն/ ըստ ԳՕՍՏ 51256-2011-ի տիպերի/	մ²	100,430	13,956	1401,614
	Ընդհանուրը				**244.374,817**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001440
ՀՎՀՀ 03027114

_____Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ, գ. Լիճք Ա6 թղմ. 12փ., տ1
Բանկը՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ՝ 220193335431000
ՀՎՀՀ՝ 08422964

_____Շ. ԽԱԼՈՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված թիվ 2
23 06 2025թ. կնքված
«ԿՄՀՔ-ԲՄՄՇՁԲ-25/24» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի 1-ին փողոցի վերանորոգման աշխատանքներ	Վերանորոգման աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար կնքված պայմանագրերից (համաձայնագրերից) վերջինի ուժի մեջ մտնելու օրը	2025 թվականի դեկտեմբերի 05-ը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001440
ՀՎՀՀ 03027114

_____Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ, գ. Լիճք Ա6 թղմ. 12փ., տ1
Բանկը՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ՝ 220193335431000
ՀՎՀՀ՝ 08422964

_____Շ. ԽԱԼՈՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 3
23 հունվար 2025թ. կնքված
«ԿՄՀՔ-ԲՄԱՇՁԲ-25/24» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 202 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**								
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	45231177	ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեոնանիստ բնակավայրի 1-ին փողոցի վերանորոգման աշխատանքներ									

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամսական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1 վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001440
ՀՎՀՀ 03027114

_____Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ, գ. Լիճք Ա6 թղմ. 12փ., տ1
Բանկը՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ՝ 220193335431000
ՀՎՀՀ՝ 08422964

_____Շ. ԽԱԼՈՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ